

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՀԽ-4

**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

19.11.2021

Խորհրդի նիստի անցկացման վայրը. ՀՀ ԱԻՆ խորհրդակցությունների դահլիճ:

Խորհրդի նիստի սկիզբը. 12:10

Խորհրդի նիստի ավարտը. 13:35

Հասարակական խորհրդի նիստը նախագահող՝ Արտակարգ իրավիճակների նախարար **Անդրանիկ Փիլոյան:**

Մասնակցում էին՝ Արտակարգ իրավիճակների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 18-ի N 1237 հրամանով հաստատված Արտակարգ իրավիճակների նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) կազմի հետևյալ անդամները՝

- 1) Արմինե Պետրոսյան - «Դիմակայուն» հասարակական նախաձեռնություն, խմբի անդամ, «Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի տնօրեն
- 2) Սուսաննա Իսաջանյան - Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» ՀԿ նախագահ
- 3) Լյուդմիլա Մելիքյան - ԱԻՆ համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ
- 4) Տիգրան Միքայելյան - «Աշխատանք և Հայրենիք տարածքային զարգացման» ՀԿ ներկայացուցիչ
- 5) Վիգեն Շիրվանյան- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ԱՌՆ կլիմայի փոփոխության ծրագրի ղեկավար,

- 6) Լուսինե Քոչարյան — Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Աղետների կառավարման ղեկավար, փոխարինել է ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանին,
- 7) Մովսես Պողոսյան – «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամի տնօրեն,
- 8) Արմեն Առաքելյան – «ԼոռԷ» փրկարար ջոկատ, ջոկատի հիմնադիր նախագահ
- 9) Ներսիկ Հեպոյան – «Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության վետերանների խորհուրդ» ՀԿ-ի նախագահ,
- 10) Արման Հովհաննիսյան, Կապան համայնքի «Աղետների ռիսկի կառավարման» խորհրդի անդամ, ՎԽԿԲ թիմի անդամ,

11) **խորհրդի անդամներից՝ Կարեն Մխոյանը, Ինգա Հարությունյանը, Հայկ Նավասարդյանը, Ալլա Սարկիսովան, Արտաշես Սերգոյանը, Թամարա Աբրահամյանը, Քրիստինե Սահակյանը և Դավիթ Մելքոնյանը** բացակայում էին հարգելի պատճառով:

խորհրդի նիստի օրակարգը՝

1. «Աղետների ռիսկի կառավարման ազգային ուղղվածությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (Զեկուցող՝ Աղետների ռիսկի կառավարման քաղաքականության մշակման վարչության **քաղաքականության մշակման** բաժնի պետ Արա Ասլանյան, զեկուցման տևողությունը՝ 15 րոպե, քննարկման համար՝ 40 րոպե):

2. Այլ հարցեր (30 րոպե)

Ողջունելով խորհրդի անդամներին՝ Անդրանիկ Փիլոյանն ընդգծեց, որ օրակարգում ընդգրկված հարցի կարևորությունից ելնելով, նիստ հրավիրելու առաջարկությունը ներկայացվել է նախարարության կողմից, հասարակական

կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և քննարկում կազմակերպելու, նրանց մոտեցումներն ու կարծիքները լսելու նպատակով:

1. «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (Ձեկուցող՝ Աղետների ռիսկի կառավարման քաղաքականության մշակման վարչության **քաղաքականության մշակման բաժնի** պետ Արա Ասլանյան, զեկուցման տևողությունը՝ 15 րոպե, քննարկման համար՝ 40 րոպե):

Արա Ասլանյանը կարևորելով աղետների ռիսկի կառավարման գործընթացների իրականացման անհրաժեշտությունն ազգային անվտանգության ապահովման ոլորտում՝ նշեց, որ անհրաժեշտություն էր առաջացել վերանայել Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը՝ համապատասխանեցնելով արդի մարտահրավերներին, առկա խնդիրներին և տալով դրանց համապատասխան լուծումներ:

Ներկայացնելով նախագծի հիմնավորումն ու ակնկալվող արդյունքը՝ Ա. Ասլանյանը ներկայացրեց հիմնական շեշտադրումները: Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության իրականացումից սպասվելիք արդյունքները կլինեն աղետների կանխումն ու կանխարգելումը, աղետների ռիսկի նվազեցումը, աղետներին արդյունավետ արձագանքումը, հետադետային վերականգնման կարողությունների հզորացումը, դիմակայունության մշակույթի ձևավորումը և այլն:

Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքն է՝ Հայաստանը դարձնել աղետներին դիմակայուն երկիր՝ նվազեցնելով աղետներից մարդկանց կյանքին և առողջությանը, երկրի տնտեսությանը և համայնքներին սպառնացող կորուստներն ու վնասները՝ ձևավորելով ամուր հիմքեր երկրի կայուն զարգացման համար:

Ա. Ասլանյանը հավելեց նաև, որ Նախագիծը լրամշակվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, միջազգային կազմակերպությունների, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի կողմից:

Հարցեր և առաջարկություններ՝

Հայկական Կարմիր խաչի ընկերության Աղետների կառավարման ղեկավար Լուսինե Քոչարյանը համառոտ ներկայացրեց Կարմիր խաչի ընկերության կողմից գրավոր ուղարկված առաջարկությունները: Նա նշեց, որ Կարմիր խաչի շարժման հիմնարար յոթ սկզբունքներից մեկը եզակիության սկզբունքն է, որի համաձայն յուրաքանչյուր երկրում գործում է Կարմիր խաչի կամ Կարմիր Մահիկի միայն մեկ ընկերություն, որն էլ համարվում է ազգային ընկերություն: Հայաստանի Հանրապետությունում Կարմիր խաչի շարժումը ներկայացնում է Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, որը հանդիսանում է կառավարությանն օժանդակ կառույց մարդասիրության ոլորտում և, որի նպատակն է՝ առանց խտրականության կանխարգելել կամ նվազեցնել մարդկային տառապանքները: Ելնելով նշվածից, **առաջարկեց՝** հաշվի առնելով Հայկական Կարմիր խաչի ընկերության դերն ու նշանակությունը ԱՌԿ ազգային ռազմավարության մեջ որպես համագործակցող կամ շահագրգիռ կողմ Հայկական Կարմիր խաչի ընկերության նշել առանձին:

Նա **առաջարկեց՝** ելնելով նշվածից, խմբագրել Ռազմավարության նախագծի մոտ 22 կետից բաղկացած իրենց առաջարկությունները:

3. Այլ հարցեր (30 րոպե)

ԱԻ նախարար Ա. Փիլոյանը նիստի մասնակիցներին առաջարկեց ներկայացնել իրենց հուզաղ հարցերը՝ միասին քննարկելու նպատակով:

2. «Դիմակայուն» հասարակական նախաձեռնության խմբի անդամ, «Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Արմինե Պետրոսյանն առաջարկեց, որ «Մեղիա կենտրոն»-ի հարթակում հանրային քննարկումներին ԱԻ-ի մասնագետների կողմից ավելի ակտիվ մասնակցություն ապահովել:

Հնչած հարցերի և առաջարկությունների կապակցությամբ՝

1. Արա Ասլանյանը Կարմիր խաչի ընկերության կողմից ներկայացրած գրավոր առաջարկությունների վերաբերյալ նշեց, որ աշխատանքային խմբի կողմից

ուսումնասիրվել է բոլոր կետերը և քննարկման արդյունքում որոշ կետեր ընդունվել են, որոշները չեն ընդունվել, նշեց նաև, որ կարծիքներն իրենց հիմնավորմամբ կներկայացվեն անդամներին: Ա. Ասլանյանը նշեց նաև, որ որոշ կետեր էլ ներառվել են ԱԻՆ զարգացման քաղաքականության հիմնական ուղղություններով 2021-2023թթ. միջոցառումների գործողությունների պլանում:

2. ԱԻ նախարարի մամուլի քարտուղար Աննա Բաղդասարյանը «Մեդիա կենտրոն»-ի հարթակում Հանրային քննարկումներին ԱԻՆ-ի մասնագետների կողմից ավելի ակտիվ մասնակցություն ապահովելու առումով նշեղ, որ կառույցը հանրային քննարկումների հարթակներում, այդ թվում նաև «Մեդիա կենտրոն»-ի, ակտիվ է, սակայն հանրային իրազեկումը միշտ ընդլայնվելու անհրաժեշտություն ունի: Նա վերահաստատեց այս հարցում նախարարության պատրաստակամությունը:

Որոշվեց՝

Ծրագիրը մշակող աշխատանքային խմբում քննարկել ներկայացրած բանավոր և գրավոր առաջարկությունները, մանրամասն ուսումնասիրել և փաստաթղթում կատարել համապատասխան փոփոխություններ ու լրացումներ, իսկ ԱԻՆ դիրքորոշման վերաբերյալ ամփոփ տեղեկանքն առաքել բոլոր անդամներին:

Ամփոփելով նիստը՝ **ԱԻ նախարար, հասարակական խորհրդի նախագահ Անդրանիկ Փիլոյանը** շնորհակալություն հայտնեց գործընկերներին մասնակցության և արդյունավետ քննարկման համար:

ԱԻ նախարար,

Նիստի նախագահ՝



Ա. Փիլոյան

Նիստի քարտուղար՝



Գ. Խանվեյան